



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

20614



1914

2010

2002

399

V


# ԿԻԼԻԿԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ԱՅՆԹԱՊ - ԿԻԼԻԿԻԱ

D. D.

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1912-1914



Ա. ՊՈՒ. ԽՍ

Ցպագրութիւն Յ. Մատեևսկան  
1914

373  
4-47

ԿԻԼԻԿԵԱՆ ՀԵՄԱՐԱՆ

ԱՅՆԹԱՊ - ԿԻԼԻԿԻԱ

— — — — —

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1912-1914



hj

Ա. ՊՈԼԻՍ

Ցպագրութիւն Յ. Մարեկսան

1914

(54)

40588-աշ



24392-61





ՏՆՈՐՅԱԶԱՐԴ Տ. Տ. ՍԱՀԱԿ Բ.

Արքազնագոյն Կաթողիկոս Կիլիկիոյ  
Նախագահ Կիլիկեան Ճեմարանի

ՍԱՀԱԿ ՇԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱ-  
ՍԱՆԵԼԻ ԿԱՄՈՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆ ԿԻԼԻ-  
ԿԻՅՅ. — Գերաշնորհ Առաջնորդաց, Արժ. Փոխանորդաց, Բարե-  
կրօն Քահանայից, Կրթասէր Ընկերութեանց ու Հոդաբարձու-  
թեանց և Համօրէն Ժողովրդոց Կիլիկիոյ, Հայազատ Որդւոց Հայ-  
Առաքելական Ա. Եկեղեցւոյ, Ողջոյն և Սէր Քրիստոսաւանդ և Օրհ-  
նութիւն Հայրական:

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծանր պաշտօնին կոչուելէ՝ ՚ի  
վեր զգացած էինք պէտքն Բարձրագոյն Վարժարանի մը՝ որ ոչ միշ-  
այն տոհմային և առողջ գաստիարակութիւն մը տար մեր նոր  
սերունդին, այլ մանաւանդ ժամանակի պահանջմանց համապա-  
տախան և մանկավարժական արդի գրութեամբ պատրաստուած  
կրթական պաշտօնեաներ, ինչպէս և մեր Ա. Եկեղեցւոյ ողջոյն  
և պէտքերուն համաձայն զարդացեալ և անձնուեր մշակներ ըն-  
ծայէր Ազգին: Ժամանակը, զմեղ շրջապատող հանդամանքները  
և ընդհանուր Կիլիկիոյ անտեսական վիճակը չենպատեցին ցարդ-  
այդպիսի կենսական և նուիրական պէտքի մը իրականացման:

Սակայն, անցեալ Մելուեմիերին, խնդադին գոհունակու-  
թեամբ տեսանք որ Ամերիկայի կրթասէր ազգայիններն ու Այն-  
թապի ժողովուրդը գովելի նախաձեռնութիւնը ունեցան բանա-  
լու «Կիլիկեան Բարձրագոյն Վարժարան»ը, որ իր նպատակովն ու  
ծրագրովը կը կոչուեր գոհացում տալու ընդհանուր Կիլիկիոյ ան-  
հըրաժեշտ պէտքերուն: Մենք, իրեւ Հովուապետ Կիլիկիոյ, մեր  
բաղձանքներոն իրեւ լրացումն ու իրականացումը՝ ուրախութեամբ  
և օրհնութեամբ ողջունելով Բարձրագոյն Վարժարանին բացման  
աւետիսը, շնորհաւորեցինք ի մասնաւորի այդ մեծ ու կենսական  
պէտքը նախատեսողները և ընդհանրապէս Այնթապի ժողովուրդը:

Եւ պարբերաբար տեղեկանալով Վարժարանին գործերուն  
և յառաջդիմութեան, ըստ հարկին գիտողութիւններ ըրինք պատ-  
շաճագոյն հրահանգներով և դիւրացուցինք Պետական Արտօնա-  
գրին ստացումը:

Մեր ուրախութիւնը կրկնապատկուեցաւ և գործին յարաւեւութեան համար յոյսերնիս զօրացաւ երբ նկատողութեան առինք Վարժարանին անդրանիկ տարեշրջանին ընդարձակ Տեղեկադիրը, Քննութեանց Վիճակացոյցը ու Տարեկան Հաջուը, զոր մատուցած էր մեղ յարդելի Հոգաբարձութիւնը:

Գոհունակութեամբ դիտեցինք յիշեալ Տեղեկադրին մէջ թէ՝ Վարժարանը բացուած է Այնթապի բարձրադիր, օդասուն և յարմար շէնքի մը մէջ, քառասուն և ութ ցերեկեայ ուսանողներու երեք կանոնաւոր գասարաններով, մէկ Տեսչի և վեց մնացուն և այցելու ուսուցիչներու (Երկուքը Համարաբանական) հսկալութեամբ և գասախոսութեամբ և տարեկան 550 ոսկիի պիտմէյով՝ որուն նպաստած են մասնաւորապէս Ամերիկայի 54 պաշտպանները՝ քսան և ութը որդեգիրներով, Թրոյի (Նիւ - Եօրի) Այնթապցիք, Մանչեսթրի ազգայինք, Այնթապի Ազգ. Խնտուկը և Վարդանեան ու Եկեղեցասիրաց Ընկերութիւնները. իսկ Նիւ - Եօրքի Հայ վաճառականներէն Տիար Միջիան ԳՈՐԾԿԵՑԵԱՆ գնահատելի աղնուութեամբ մը ինքնարերաբար հաճած է գոցել Վարժարանին տարեկան բացը (130 լ. 0.):

Թէ՝ Հոգաբարձութեան անդամներէն հանդուցեալ Տիար ՅԱԿՈԲ ԽԱԶԱՏՈՒԹԵԱՆ 200 Օսմ. ոսկիի կտակ մը թողած է ՚ի նըպաստ Վարժարանին, իսկ Այնթապի ազգայիններէն Տիար ԱՈ.ՊԳԻՍ կ. ՆԱԶԱՐԵԱՆ խոստացած է 1000 լիրայի նուիրատուութեամբ մը Վարժարանին ընծայել սեպհական շէնք մը, Տիար ԳՈԼՈՒՑ ՊՈՅՈՒԹԵԱՆ, և Մարաշի ազգայիններէն Տիար ՄԵԼՔՈՆ ՀԱԶԱՐԴ-ՊԵՏԵԱՆ պատրաստակամութիւն յայտնած են կարեւոր նուէրներով սատարել Վարժարանին:

Թէ՝ վարժարանը ունեցած է համեստ Գրադարան մը, կազմուած Ամերիկայի Հայասէրներու նուէրներով, զոր հաւաքած է Վարժարանին Տեսուչը՝ Տիար Արմենակ Չամիչեան, իր Ամերիկա դանուած միջոցն:

Թէ՝ վերջապէս Վարժարանը այժմէն բոլոր Կիլիկեցւոց օգտակար ընծայելու նպաստակաւ, որոշուած է յառաջիկայ Աեալտերէն սկսեալ Գիշերութիւնի բաժին մ'ես ունենալ, ու առայդ հարկ եղած պատրաստութիւններն աեսնուած են արդէն:

Ասկէ զատ, գոհունակութեամբ տեղեկացած ենք նաև թէ Ամերիկայի մէջ բարեսէր տասը ազգայիններէ կազմուած է մասնախութիւն մը՝ նիւթական և բարոյական օժանդակութիւն ձեռք բերելու համար ի նպաստ Վարժարանին, և կազմուելու վրայ է Խնամանկալութիւն մը Հայ և Ամերիկայի կարեւոր անձնաւորութիւններէ բաղկացեալ, որ աւելի ընդարձակ իմն, հիմնական և գործօն գեր մը կոչուած է կատարել Վարժարանին գոյութիւնն և արդիւնաւոր յարատեւութիւնն ապահովելու: — Հայ. Բարեգործական Ծնդհ. Միութիւնը, գնահատելով հաստատութեան նպաստակն և ազգօգուած հանդամանքը, բարեհաճած է 50 Օամ. ոսկիի նպաստով մը քաջալերել զայն իր Ա. տարեշրջանին առնելու. իսկ Հալէպի և Քիլիսի թեմերուն ազգայինք, ի նըկատի ունենալով ձեռնարկին աւագ կարեւորութիւնը՝ ինքնայրդոր կազմած են Մասնաճիւղեր, նպաստելու համար հաստատութեան բարոյական և նիւթական աշակցութիւններով:

Սակայն և այնպէս, որքան ալ Վարժարանին շուրջ ցարդ ձեռք բերուած յաջողութիւններն և անոր գտած ընդունելութիւնը անհուն ուրախութեան և լայն ափոփանքի առիթ եղած են մեղ, մենք նախատեսելով յիշեալ հաստատութեան ընդհանուր հանդամանքը և գործին մեծութիւնն, արդար և խղճի համաձայն շէնք աեսած երբէք որ ընդհանուր Կիլիկիոյ կրօնական և բարոյական բարգաւաճման նպաստելու կոչումն ունեցող վարժարանի մը նիւթական և բարոյական բավանդակ պատասխանատութիւնը ծանրանայ մի միայն Այնթապցւոց ուսին վրայ:

Ուստի և ներկայ Հայրապետական Կոնդակով յայտնելով մեր գոհունակութիւնն և համամտութիւնն Այնթապցւոց վճռական կան նախաձեռնութեան մասին և հաստատութեան ձեմարան յորջործումը աւելի պատշաճ գոնենելով իր նպաստակին ու ծրագրին, յետ այսու Կիլիկեան ձեմարան կ'անուաննենք և կոչում կ'ընենք ընդհանուր Կիլիկեան վիճակներուն Գերազանք Առաջնորդաց, Արժ. Փոխանորդաց, Քահանայական դասուց, Կրթական Ընկերութեանց և համայն բարեպաշտ ֆոլովրդեան, որպէս զի զանան իրենց բարոյական ու նիւթական աշակցութիւնն ու գործակցութիւնը նուիրել Կիլիկեան ձեմարանի բարգաւաճման և յարատե-

ւոթեան՝ մասնաճիւղեր կազմելով, սաներ որդեգրելով, դրամական նուէրներով, մասնաւոր կտակներով, օդտակար և ջնիվ դրքեր նուիրելով, փոխանակ նոյնօրինակ օտար և հեռաւոր հաստատութեանց՝ սոյն ձեմարանը զրկելով իրենց զաւակները, յարմար և կոչում ունեցող վարժապետուներ և քահանայացուներ յանձնարարելով ևն ևն:

Յոյս մեծ ունենալով որ համայն կիլիկեցիք մեզ նման ուշախութեամբ պիտի ողջունեն ներկայ և ապագայ սերունդներուն տոհմային ու առողջ գաստիարակութեան, մանկավարժական դրութեամբ զարգացեալ ուսուցիչներ և Ս. Եկեղեցւոյ պէտքերուն համաձայն և իրենց պարտուց ու կոչումին դիտակից մշակներ խոստացող նուիրական հաստատութիւնը և ամեն գորդուրանքներով պիտի շրջապատեն զայն, ի բարոր սրաէ կը հայցեմք Աստուծոյ օրհնութիւնն և օդնութիւնը հաստատութեան անսայթաք յարաւեւութեան համար:

Նոյն օրհնութիւնը կը մաղթեմք կրթատէր Բարերարաց, պատուարժան Հոգաբարձութեան, բարեցան Տեսչութեան և Ուսուցչաց և բովանդակ ժողովուրդին Այնթապու և կիլիկիոյ, որ զուարժօրէն պիտի առատաձեռնեն իրենց բարոյական ու նիւթական աշակցութիւնը, և կը մաղթենք որ երանաշնորհ Սահակներու, Մերաբաներու և ներսէներու հոգին զօրացնէ և առաջնորդէ ներկայ և ապագայ ուսանողները:

Ի 11 Օգոստոսի 1913 Ամի

ՍՍ.ՀԱ. Թ. ԿԱ.ԹՈՒ.ԻԿՈՍ ԿՈՒՆԻՒԹՈՅ

Ըստ Տոմարի Ռ.Ց.Բ.

Ի Հայրապետութեան Մերում Ժ. ամի  
յԱստուածազահ բաղաբն Մարտ


Թիի 237

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ՅԱՅՏԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ

### ԿԻԼԻԿԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Մասնակի տեսարան Անթաղի, որու հիւլիսացին արեւմտեան կողմը կը տեսնուի  
Տիւլւկի (Տվոք) պատմագան բլուրը



## ՕՐԱՑՈՅՑ ԿԻԼԻԿԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

1913

Սեպտ. 15 թշ. եւ 16 գւ.	.....	Մուտքի Քննութիւններ:
Սեպտ. 17 դւ.	.....	Դպրոցական տարին կ'սկսի: Արձանագրութիւն ուսանողաց եւ վճարում ուսումնական եւ ուստեստի թոշակի առաջին մասնավճարին:
Սեպտ. 18 եւ.	.....	Դասախոսութիւնը կ'սկսին:
Սեպտ. 29 թշ.	.....	Ցիշատակ Մեռելց (Խաչվերաց):
Հոկտ. 26 կիր.	.....	Կիլիկեան ձեմարանի Պաշտօնապէս Բացման հանդէսը (Հայ Գրոց Գիւտին 1500 ամեայ եւ Տպագրութեան 400 ամեայ Յորելեանին առ.թիւ):
Նոյմ. 17 թշ.	.....	Առաջին Երկամսեայ Քննութիւնը կ'սկսին:
Նոյմ. 27 եւ.	.....	Արձակուրդ:
Դեկտ. 13 դր.	.....	Տօն Թաղէոս եւ Բարթողիմէոս Առաքեալներու:

1914

Յունվ. 14 դւ.	.....	Հայկական Կաղանդ:
Յունվ. 17 դր. Յունվ. 26	.....	Ո. Ծնունդի Արձակուրդ:
Յունվ. 31 դր.	.....	Օր վճարման ուսումնական եւ ուստեստի թոշակի՝ վերջին մասնավճարին:
Փետր. 2 թշ.	.....	Կիսամեայ Քննութիւնները կ'սկսին:
Փետր. 26 եւ.	.....	Տօն Վարդանանց Զօրավարաց:
Փետր. 27 Ուր.	.....	Տեառնընդառաջ:
Ապրիլ 6 թշ.	.....	Երկրորդ Երկամսեայ Քննութիւնը կ'սկսին:
Ապրիլ 16 Աւագ եւ. միջնու Ապր. 26	.....	Ո. Զատակի Արձակուրդ:
Մայիս 1 Ուր.	.....	Վերջին օր՝ Հայ. մրցման շարադրութիւնները լանձնելու (Տոր. 8. Մարկոսեան մրցանակներու համար):
Յունիս 24 դւ.	.....	Տարեկան Հանդէս:

1914 – 1915 ՏԱՐԵՇՐՋԱՆ

1914

Օգոստ. 15 դր.	.....	Վերջին օր նպաստի վերաբերեալ դիմումները համար:
Սեպտ. 14 թշ. եւ 15 գւ.	.....	Մուտքի Քննութիւններ:
Սեպտ. 16 դւ.	.....	Դպրոցական Տարին կ'սկսի: Արձանագրութիւն ուսանողաց եւ վճարում ուսումնական եւ ուստեստի տարեթոշակի՝ առաջին մասնավճարին:
Սեպտ. 17 եւ.	.....	Դասախոսութիւնը կ'սկսին:

ԾԱՆՈԹ. — Օրացոյցիս, ինչպէս նաև Տեղեկագրիս մէջ յիշուած Թուականները Կոր Տումարով են:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՔ

### 1. ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ Յ'ԱՄԵՐԻԿԱ.

<b>Տոֆր. Անդրանիկ Սյյլազեան (M. D.),</b> Նիւ-Եռոբ,	Ատենապետ
<b>Վահան Քիւրենեան (A.B., LL.B.)</b> (Փաստաբան) Պոստոն	Փոխ-Ատենապետ
<b>Միհրան Գարակէօզեան (Վաճառական),</b> Նիւ-Եռոբ . . . .	Գանձապետ
<b>Դարեզին Կիրակոսեան (Վաճառական),</b> Պոստոն . . . .	Փոխ-Գանձապետ
<b>Արմենակ Նազարեթեան (Խմբագիր),</b> Պոստոն . . . .	Ատենադպիր
<b>Աւետիս Գ. Սէլեան (B.A., Վաճառական),</b> Պոստոն . . . .	Փոխ Ատենադպիր
<b>Թուրա Գ. Լազարեան (Վաճառական)</b> Պոստոն . . . .	Խորհրդական
<b>Կարապետ Յ. Գարակէօզեան (Վաճառական)</b> Պոստոն . . . .	Խորհրդական
<b>Բրօֆ. Յարութիւն Մ. Ցառութեան (Ph. D., Աւուցիչ</b> ի Ելլ ճամալսարան), Նիւշէյվի . . . . .	Խորհրդական
<b>Miss Alice Stone Blackwell, Պոստոն . . . . .</b>	Խորհրդական

### 2. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ Յ'ԱՅՆԹԱՊ

<b>Գեր. Տ. Փառէն Մ. Արդ. Կլայնցի,</b> Կամողիկոսական Ներկայացուցիչ . . . . .	Նիսգի. Հոգրքանութեան.
<b>Բրօֆ. Արմենակ Յ. Զամիչեան (B.S., M.A.),</b> Տեսուչ Ճեմարանի . . . . .	ի Պաշտօնէ:
<b>Յակոբ Գ. Լազարեան (Վաճառական)</b> . . . . .	Ատենապետ
<b>Հրանդ Գ. Միւլահեան (Վաճառական)</b> . . . . .	Ատենադպիր
<b>Նուրինեան Նիզիզլեան (Ատամեարոյդ)</b> . . . . .	Գանձապետ
<b>Արժ. Տ. Ներէս Քինց. Թափուզնեան</b> . . . . .	Խորհրդական
<b>Արժ. Տ. Գարեզին Քինց. Պոզարեան</b> . . . . .	Խորհրդական
<b>Յակոբ Համբոլեան (Վաճառական)</b> . . . . .	Խորհրդական
<b>Յակոբ Խաչատրութեան (Հանգուցեալ Ապրիլ 6/19, 1913 )</b>	Խորհրդական



ՀՀ Ազգային Հոգրքանութեան պարկելուն թիվ 6 հմտութիւն

## ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

**Բրօք. Արմենակ Յ. Զամիչեան, B.S.M.A.** (Շրջանաւարտ State Normal Schoolէն Bridgewater, Mass. և Harvard Universityէն, Cambridge, Mass.) Տէսուչ ձեմարանի, Մասնագէտ Ուսուցիչ Մանկավարժութեան, Պատմութեան և Փիլիսոփայական Գիտութեանց:

**Բրօք. Օովսէփ Գ. Միսիրեան, Ph.B.** (Շրջանաւարտ Yale Universityէն, New Haven): Մասնագէտ Ուսուցիչ Ուսողութեան և Բնապատմական Գիտութեանց:

**Բրօք. Գրիգոր Սարգսեան, B. D.** (Շրջանաւարտ Yale Universityէն, New Haven): Մասնագէտ-Ուսուցիչ Բարյազիտութեան, Բնկերաբանութեան և Աստուածաբանական Գիտութեանց. (1914 Սեպտ.էն սկսեալ):

**Բրօք. Արմենակ Ա. Գասարեան, B.S.** (Massachusetts Institute of Technology 3 տարի, Շրջանաւարտ Worcester Polytechnic Instituteէն): Մասնագէտ-Ուսուցիչ Բնական Գիտութեանց (1914 Սեպտ.էն սկսեալ):

**Արշակ Սեղրասեան,** (Վ.Լայեալ Նանսիի Ecole Supérieure de Commerceէն և Institut Commercial էն): Այցելու Ուսուցիչ Ֆրանսիական լեզուի: (1913էն սկսեալ):

**Գեր. Տ. Փառէն Ծ. Վարդ. Կլայեցի.** (Արմաշու Դպրեվանքէն): Այցելու Ուսուցիչ Հին Հայերէնի: (1913էն սկսեալ):

**Արժ. Տ. Ներսէս Քիհնի. Թավուգնեան,** (Արմաշու Դպրեվանքէն): Այցելու Ուսուցիչ Կրօնազիտութեան:

**Հրանդ Գ. Սիւլահեան,** Այցելու Ուսուցիչ Գծագրութեան և Խւզաներկ նկարչութեան: (1913էն սկսեալ):

**Կարապէս Մուղամեան,** (Շրջանաւարտ Կ. Թ. Գ.էն): Ուսուցիչ Օմանմերէնի, Ցոմարակալութեան և Նոր Հայերէնի: (1913էն սկսեալ):

**Փիլիպոս Սարգիսեան,** (Շրջանաւարտ Շահնազարեանէն): Այցելու Ուսուցիչ Գեղագրութեան և Գծագրութեան (1912-1913 շրջանին):

**Յակոբնան Եաղուպեան,** (Արմաշու Դպրեվանքէն): Այցելու Ուսուցիչ Հայերէնի ու Ֆրանսիական լեզուի: (1912-13 շրջանին). Այժմ Ազգ. Պատմութեան:

**Յակոբ Գալէմիսեան,** (Շրջանաւարտ Կ. Թ. Գ.էն): Այցելու Ուսուցիչ Հին Հայերէնի (1912-13 շրջանին):

**ԶԵԼԷՎԻ ԶԱՅԵ ԽՈՎԵՐԻ,**

Այցելու Ռւսուցիչ Օմաներէնի ու Օսմ. Պատմութեան (1912-13 Հրանին):

**Խալիս Քեամի Պէյ,** (Շրջանաւարտ Պոլսոյ Առեւտրական Բարձր. Վարժարանէն):

Այցելու Ռւսուցիչ Օմաներէնի, (1913էն սկսալ):

Գ Ի Շ Ե Բ Օ Թ Ի Կ Ի Բ Ա Ժ Ի Ն

**Գեր. Տ. Փառէն Մ. Վարդ. Կլայնցի,**

Տնօրէն Գիշերօնիկի Բաժնին:

**Տոփ. Մուտեղ Հատիեհան, M. D.**

Բժիշկ Ճեմարանի ու Գիշերօնիկի Բաժնին:



Ռւսուցական մարմին Կիլիկիան ձեմարանի

## ԿԻԼԻԿԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

### ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Այնթապի Վարդանեան Ընկերութիւնը, որ Կիլիկիոյ ազգային-կրթական գործին մէջ կարեւոր դեր մը կատարած է, իր յիսուն տարուան գոյութեամբ, շատոնց առաջադրած էր հիմնել հայկական Գոլէճ մը՝ նկատի առնելով Կիլիկիոյ շեշտուած պէտքը այսպիսի հաստատութեան մը, որ կարող ըլլար ժամանակիս պահանջման համեմատ ազգային ուժեղ զարգացում մը տալ հայ երիտասարդութեան :

Այս հաստատութիւնը բոլորովին զաա պիտի ըլլար նոյն Ընկերութեան հաստատած Վարդանեան Կրթարանէն, որ հայ նախակըրթութեան նուիրուած վարժարան մըն է :

1901 Յունվր. 22ին Վարդանեան Կրթարանի ընթացաւարտ ու թերաւարտ սաները Վարդանեան Ընկերութեան այդ առաջադրութեան օր առաջ գործադրութեան օգնելու համար, կը կազմէն Վարդան Սահմանադրութեան, որ մէկ կողմէն կը ձեռնարկէ դրամագլուխ մը շինել եւ միւս կողմէն սպագայ ուսուցիչները պատրաստել : Եւ այս նըպատակով ալ 1906ին՝ Վարդանեան Կրթարանի շրջանաւարտներէն Արմենակ Զամիշեան եւ Յարութիւն Խաչատուրեան Ամերիկա կը ղըրկուին Վսեմ. Պողոս Փաշա նուպարի պաշտպանութեամբ :

Այնթապի Եւելուստուար Ընկերութեան ալ, որու նպատակն է ուսեալ Հայ Եկեղեցականներ հասցնել իր նպաստներով եւ իր հիմնելի ընծայարանով, Ամերիկա ղրկած էր Պր. Գրիգոր Մասէրէճեանը Աստուածարանական Դասընթացքի հետեւելու համար :

Վերոյիշեալ Ուսանողները, Բարձրագոյն ուսում ստանալու համար Ամերիկայի զանազան համալսարաններու հետեւող Այնթապցի Պ. Պ. Արմենակ Գասարճեան, Գրիգոր Եւ Գէորգ Սարաֆեան, Արամ Խաչատուրեան եւ Սարգիս Պաղտօեանի հետ, 1911 Յուլիս 9-10 կը ժողովուին, Պրիճուօթիքի Պետական Վարժապետանոցը, ուր կարեւոր խորհրդակցութիւններ կ'ընեն Կիլիկիոյ ազգային-կրթական ու Եկեղեցական ընդհանուր պէտքերուն շուրջ, նկատողութեան կ'առնեն Այն-

թապի Վարդանեան ու Եկեղեցասիրաց Ընկերութեանց հետապնդած անջատ նպատակներն ու պատրաստութիւնները, ու միաձայնութեամբ կ'որոշեն ձեռք առնել հարկ եղած միջոցները, Ամերիկա գտնուող Կիլիկիցիներու մէջ միութիւն մը հաստատելու համար, ու միանգամայն կը դիմեն Այնթապի Ազգ. Գաւառական Ընդհ. Ժողովին, Աղենական, Վարդանեան ու Եկեղեցասիրաց Ընկերութեանց, գործակցութեամբ ձեռնարկելու «Կիլիկիան բարձրագոյն վարժարան»ի մը հաստատութեան, տալով անոր ազգային ընդհանուր հանգամանք մը:

Դիմումները ընդունելութիւն կը գտնեն եւ Այնթապի Գաւառական Ընդհ. Ժողովը, Վարդանեան ու Եկեղեցասիրաց Ընկերութիւնները կ'որոշեն միացնել իրենց ոյժերը ու խնդիրը Գաւառական Ընդհ. Ժողովոյ կողմանէ կը տեղեկագրեն Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին: Ն. Ս. Օծութիւնը Հայրապետական օրհնաձիր կոնդակով մը (1911 Նոյմ. 14, թիւ 246) կ'օրհնէ ու կը քաջալերէ Ամերիկայի Այնթապի ուսանողները, որոնք կը խոստանային իրենց ուսումը աւարտելէ ետքը վերադառնալ Կիլիկիա ու ծառայել հիմնելի հաստատութեան մէջ:

Վարդանեան ու Եկեղեցասիրաց Ընկերութիւններն, իրենց փափաքներուն իրականացումը աեսնելով «Կիլիկիան Բարձրագոյն վարժարան»ի ծրագրին մէջ, մասնաւոր հասկցողութեամբ մը կը միացնեն իրենց նիւթական ու բարոյական ոյժերը եւ ըստ այնմ երկու ընկերութեանց Ընդհանուր Ժողովները կ'ընտրեն Հոգաբարձութիւն մը, 1912 Մայիս 28ին:

Նորընտիր Հոգաբարձութիւնը կը ձեռնարկէ իր պաշտօնին եւ «Կիլիկիան Բարձրագոյն Վարժարանի»ն տեսչութեան կը հրափրէ Պր.Արմենակ Զամիչեանը, պաշտօն աալով անոր կազմել նոյնիսկ Ամերիկայի մէջ Ուսուցչական մարմինը, գտնել պաշտպաններ աղքատիկ ուսանողներու համար եւ վերջապէս աշխատիլ Գրադարանի մը հաստատութեան նախապատրաստութեան:

Ուսուցչական մարմինը կը կազմուի Պ. Պ. Տեսուչ Ս. Զամիչեանէ, Յ. Միսիրեանէ ու Գ. Մասէրէճեանէ, իսկ օգնական ուսուցիչներու ընտրութիւնը կը վերապահուի Այնթապ:

Տեսուչ՝ Պոսթոն, Պրիճուօթը, Նիւէյֆն եւ Նիւեռք ուղեւութիւն մ'ընելով, բարեկամներու աջակցութեամբ, կը յաջողի յիսուն չորս պաշտպաններ արձանագրել: Կը դնէ նաեւ հիմը գրադարանի մը, իբրև նուէր ընդունուած 400 հատորի մօտ գրքերով, որոնց մէջ մամնաւոր յիշատակութեան արժանի է Պրիճուօթը Պետական Վարժապետանոցի

Ուսուցչական Մարմին եւ Ուսանողութեան թանկագին նուէրները:

Մեծայարգ Պաշտպաններու քուէարկութեամբ կ'ընտրուի «Օժանդակ Մասնախումբ» մը Ամերիկայի համար, խոստացուած նպաստները գանձելու, վարժարանի բարեկամներուն թիւը բազմապատկելու եւ պաշտպաններու ու վարժարանի միջեւ հաղորդակցութեան միջոց մ'ըլլալու նպատակով:

Մինչ այս գործերը յառաջ կը տարուին յԱմերիկա, Այնթապի հոգաբարձութիւնը մասնաւոր Ցայտագրով մը կը ծանուցանէ Կիլիկիան Բարձրագոյն Վարժարանի բացման, ընդունելութեան պայմաններու, մուտքի քննութեան եւն. պարագաները, կը պատրաստէ շէնքը յարմարագոյն դիրքի մը վրայ:

Ուսուցիչք կը մեկնին Ամերիկայէ 1912 Յուլիս 22 ին դէպի Այնթապ: Իսկ Տեսուչը, Հոգաբարձութեան եւ Օժանդակ մասնախումբի յանձնարարութեամբ, դիմումներ կը կատարէ Մանչեսթրի, Լոնտոնի, Բարիզի Հայութեան, կը ներկայանայ Վանմ. Պողոս Փաշայի եւ կը տեսակցի երուանդ Աղաթօն Պէյի հետ ի Զուփերիա, ու կը պարզէ վարժարանին նպատակն ու պէտքերը: Դիմումներ կ'ընէ նաեւ ի Պոլիս Վարժարանին Սրբազնի, Վանմ. Գարրիէլ էֆ. Նորատունկեանի Արշարունի Սրբազնի, Վանմ. Գարրիէլ էֆ. Նորատունկեանի եւ այլ ականաւոր անձնաւորութեանց եւ կը համնի Այնթապ Օգոստ. 27ին: Պր. Գ. Մասէրէճեան ճամբան հիւանդանալով կը մնայ Գաճիրէ եւ հոն կը վախճանի ուղեղատապէ (1912 Հոկտ.), իսկ Պր. Յ. Միսիրեան կը համնի Այնթապ ողջ առողջ:

Ուսուցչական մարմինը վերջնականացէ կը կազմուի եւ գըպրոցական շէնքի ու առարկաներու վերաբերեալ պատրաստութիւններն աւարտելով, վարժարանը կը բացուի 1912 Մեպտ. 6/19 Հինգշարթի առոտու, «Կիլիկիան Բարձրագոյն Վարժարան» անունով:

Վարժարանի բացումէն առաջ դիմում եղած ըլլալով կառավարութեան, հաստատութեանս պաշտօնական վաերացումը ձեռք կը բերուի 1913 Մարտ 19ին, Կրթական Գործոց նախարարութեան պաշտօնագրով (1912 Դեկ. 31 թուակիր ու 152851 համարաւ) Հալէպի Կրթական Տեսչութեան, «Կիլիկիան էրմէնի Տար իւլ Մուալլիմին ի Ռիշտի» արձանագրութեամբ (թիւ Արտօնագրի 130):

Կիլիկիոյ Շնորհազարդ Ս. Կաթողիկոսը իր շնորհած Օրհնութեան Կոնդակով (1913 Օգոստ. 11 թուակիր ու 237 համարաւ) հաստատութեանս անունը փոխեց եւ ըրաւ Կիլիկիան ձեՄԱՐԱՆ:

## ՆՊԱՏԱԿ

Կիլիկեան ձեմարանի նպատակն է գիտական ու քրիստոնէական սկզբունքներու վրայ հիմուած տոհմային եւ բարձրագոյն կրթութիւն մը տալ:

Այս նպատակին համնելու համար ձեմարանս պիտի աշխատի՝

1. Ընդհանուր դաստիարակութեամբ մը, գիտակից ու զարգացեալ չայ Երիտասարդներ հասցնել :

2. Կիլիկիոյ ազգային վարժարամներուն համար արդի մանկա՝ վարժական սկզբունքներով՝ դաստիարակուած Ուսուցիչներ պատրաստել:

3. Չայ Եկեղեցւոյ ոգւոյն ու պէտքերուն համաձայն ժամանակակից զարգացումով Եկեղեցականներ հասցնել :

Ուստի ձեմարանս բաց է այն չայ Երիտասարդներու առջեւ, որոնք առողջ, գործնական եւ միանգամայն ազգային կրթութեան մը փափառող են, եւ անոնց, որ մասնաւորապէս կ'ուզեն Ծնդգրկել Ուսուցչական կամ Եկեղեցական ասպարէզը :

## ԾՐԱԳԻՐ

Կիլիկեան ձեմարանի Ուսումնական Ծրագիրը հիմնուած է վերեւ բացատրուած նպատակի եւ սկզբունքներու վրայ : Ձեմարանս ունի քառամեայ շրջան մը, որու առաջին երկու տարիները Ընդհանուր Դաստիարակութեան ըլլալով՝ պարտաւորիչ է ամէն ուսանողի համար . իսկ վերջին երկու տարիները Մասնագիտական ըլլալով՝ ուսանողները ազատ են հետեւելու մասնագիտական ճիշդերէն մէկուն, որուն համար մասնաւոր փափաք ու մասնաւանդ կոչում կ'զգան իրենց մէջ . հետեւաբար ձեմարանս ունի՝

1. Ընդհանուր Դասընթացք մը եւ
2. Մասնագիտական Դասընթացքներ՝

Ա. Մանկավարժական Դասընթացք  
Բ. Եկեղեցագիտական Դասընթացք.

24398-6/

## ԴԱՍԱՀՈՐՈՒԹԻՒՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ

Ձեմարանիս մէջ արձանագրուող ուսանողները կը դասաւորուին հետեւեալ կերպով,

Ա. Կանոնադրութեան ու պահպանութեան մէջ ու կը հետեւին նոյն Դասընթացքի բոլոր դասերուն, առանց բացառութեան :

Բ. Մասնագիտական Ուսումնական մէջ ու կամ Ծնթացաւարտ ըլլալով ձեմարանիս Ընդհանուր Դասընթացքին, ուրիշ Երկրորդական վարժարաններէ եւ կամ Երկրորդական կրթութեան համագօր պատրաստու-

ԾԱՆՈԹ. — Երբ ձեմարանիս նիւթական միջոցները ձեռնոտու ըլլան, առաջադրուած է նաև հաստատել ուրիշ դասընթացքներ։



թիւն մ'ունենալով, կ'ընդունուին Մանկավարժական կամ Եկեղեցագիտական մասնագիտական դասարաններու մէջ :

Գ. Մասնաւոր Ուսումնական որոնք ձեմարանիս Ընդհանուր կամ Մասնագիտական դասընթացքներուն չեն հետեւիր, այլ Տեսչութեան մասնաւոր թոյլտուութեամբ կ'ընտրեն քանի մը դասեր զանազան դասարաններէ :

Մասնաւոր Ուսանողներու դրութիւնը առժամանակեայ կարգադրութիւն մըն է, որ ի հարկին կընայ խափանուիլ :

Դ. Նախառարարության դատավորությունը. — Այն ուսանողներ, որոնք  
Ըստհանուր դասընթացքի Առաջին դասարանը չեն կրնար մանել, յետ  
քննութեան իրենց յարմար կարգերու մէջ կը դրուին նախապատրաս-  
տական Բաժնին մէջ, որ կազմուած է դիւրութիւն մընծայելու համար  
անպատրաստ ուսանողներուն:

## ՀՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Դպրոցական տարին կ'սկսի Սեպտեմբերի երրորդ Զորեքշաբթի օրը (ըստ Նոր Տօմարի), կը բաժնուի երկու կիսամեայ շրջաններու։ Առաջինը կը տեւէ բացումէս մինչև Յունուար 31, երկրորդը՝ Փետրուար 1 ին մինչեւ Յունիսի չորրորդ Զորեքշաբթի օրը։

Շրջանի ընթացքին երկու արձակուրդներ կան, Ծնունդի եւ Զատկի առթիւ, որոնց հրաֆանչիւրը շաբաթ մը կը տեսէ: Ճեմարանս նաեւ փակ է Հայ Եկեղեցւոյ գլխաւոր տօնմերուն (Տես Ճեմարանի Օրացոյցը Տեղեկագրիս սկիզբը): Ամառնային արձակուրդը կը տեսէ երկուք ու կէս ամիս:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ճեմարանիս Առաջին դասարանը կ'ընդունուին այն ամէն հայ ապահովագործութիւնը, որ 15 տարիքը լրացուցած Ազգ. Բարձրագոյն Նա-

խակրթարանէ մը ընթացաւարտ եղած են եւ կամ անոր համապատասխան կրթութիւն մ'առած են :

ବୀରାଫାନ୍ଧିତ ପ୍ରସାନ୍ନତି ଘରଟି ନେରକୁଅଯଦିନେ

1. Իր Հար + մասին գոհացուցիչ Վէայակէր մը այն վարժարանէն որմէ բնթագաւառտ եղած է:

2. Բժշկական վեպութեր մը իր առողջութեան գոհացուցիչ վիճակը հաստատող, ու Պատուական վեպութեր մը:

### 3. Ուսումնական կարողութեան մէկ վէճակացոց :

4. Իր Անշնառէեւը (Նութուս թէզքէրէսի) եւ Ծննդեան Վէպանէեւը:  
 5. Նպաստընկալ ուսանողները պէտք է ներկայացնեն նաեւ  
 իրենց կարօտութեան մասին Յանշնառբարձրէան մը, պաշտօնական մարմ-  
 նոյ մը կողմէ:

Ճեմարանիս Առաջին դասարանը (Երիցագոյն) մտնելու համար ուսանողը պարտին գոհագուղիչ կերպով անզնել հետեւալ քննութիւններու:

ՑՈՒՑԱԿ ՔՆՆԵԼԻ ԱՐԱՐԿԱՆԵՐՈՒԻ

Կրօնագիտութիւն. — Հայ Եկեղեցւոյ Համառօտ Պատմութիւն և Ներքածութիւն Աւետարանի, Ժամանակագրական և մեկնաբանական ծանօթութիւններով :

Հայերեն. — Ա. Աշխարհաբար. — Ճաշակ Նոր Գրականութեան Բ. (Դաւթեան), կամ, Մեղրագետ՝ Բարձրագոյն Ընթացք, Քերականութիւն Լրացուցիչ (Գաղանակեան): Շարադրութիւնն: Բ. Գրաբար. — Հատընալիր Ըսթեղոցածք (Թոռնեան), Քերականութիւն (Գաֆաւմանեան):

Օսմաներէն. — Օսմանլը Էսէպիլյաթը Նիւմունէլէրի կամ Թարղը Նէվին Դրա՞մթ Ե. տարի: Ընդարձակ քերականութիւն, ուղղագրութիւն, շարադրութիւն:

**Անգլիականը.** — The Heath Reader, 5th year, English Composition,  
Grammar, Letter-Writing.

Յրանսերեն. — Choix de Lecture, Cours Moyen, ընթերցում, թարգմանութիւն, խօսակցութիւն, շարադրութիւն, Քերականութիւն (Larive et Fleury, 2me Année):

Պատմութիւն. — Համառօտ Ընդհ. Ազգաց, Ընդարձակ Օսմանեան Պատմութիւն և Հայոց Պատմութիւն (Կ. Պատմաճեան և Ս. Պալասանեան):

Ուսողութիւն. — Geometry, by Phillips and Fisher, Plane and Solid.

Բնական Աշխարհագրութիւն. — By Prof. Tarr.

Կենդանաբանութիւն. — Descriptive and Practical Zoology, by B. P. Golton.

Բնախօսութիւն. — Physiology, by B. P. Golton.

### ՄՈՒՏԻ ՔԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Նորեկներու մուտքի քննութիւնները տեղի կ'ունենան Սեպտեմբերի երրորդ երկուշաբթի եւ Երեքշաբթի օրերը (ըստ Նոր Տոմարի), առտուն ժամը 8.30 ին ու կէսօրէ վերջ ժամը 1.30 ին (Ը. Ե.):

Ուսանող մը չկրնար դասարան ընդունուիլ, մինչեւ որ բոլոր մուտքի քննութիւնները չաւարտէ:

Ուսանող մը պէտք է կանոնաւորապէս կարգին հետ առնէ այն ամէն դասերը, որոնց մուտքի քննութիւնը չէ կրցած անցնել:

Այն ուսանողը, որ չկրնար լրացնել Ընդունելութեան եւ Մուտքի քննութեանց պայմանները, կը մերժուի:

ԾԱՆՈԹ. — Տարեշրջանի միջոցին նոր աշակերտ չ'ընդունուիր Ճեմաքան

### ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԾԱԽՔԵՐ

Ճեմարանիս Ուսումնական տարեթոշակն է առ այժմ 3 Օսմ. ուսկի, բոլոր ուսանողներու համար:

Դասագրքերը ու դպրոցական բոլոր պիտոյքները կը հոգացուին ուսանողներու կողմէ:

Գիշերօթիկ ուսանողները, բացի Ուսումնական տարեթոշակէ, առանձինն կը վճարեն նաև իրենց ապրուստի, բնակարանի, լոյսի, լուացքի ու վառելիքի ծախքերուն համար տարեկան 10 Օսմ. ուսկի, (Ամառնային արձակուրդին Գիշերօթիկի բաժինն ալ կը փակուի):

Գիշերօթիկ ուսանողները իրենք կը հոգան անկողնի բոլոր պէտքերը բացի մահճակալներէ (քարեօլա), որ Ճեմարանի կողմէ կը տրուի:

Գիտական Աշխատանոցի համար կը պահանջուի փոքր գումար մը, եղած ծախքին համեմատ:

Բոլոր Ուսանողք համազգեստ կը հագնին, որու ծախքն է մօտաւորապէս 6 մէջիտ:

Նորեկ ուսանողներէ կը պահանջուի կէս Օսմ. ուսկիի կանխավըճար մը մուտքի քննութիւններուն ընդունուելու համար. յաջող քննութիւն անցնելով Ճեմարան ընդունուող ուսանողներուն Ուսումնական տարեթոշակի հաշտոյն կ'անցնի յիշեալ գումարը:

Ճեմարանի Ընդհանուր դասընթացքի Վկայագրին համար կէս Օսմ. ուսկի, իսկ Մասնագիտական դասընթացքի Վկայագրին համար մէկ Օսմ. ուսկի կը պահանջուի իրաքանչիւր շրջանաւարտէն:

### ՎՃԱՐՈՒՄՆԵՐՈՒ ԿԵՐՊԸ

Բոլոր ուսանողներէ կը պահանջուի Ճեմարանիս Գանձապետին վճարել իրենց Ուսումնական ու Գիշերօթիկի տարեթոշակին կէսը Ճեմարանի բացման օրը (Դշ) եւ միւս կէսը՝ Երկրորդ կիսամեայ շրջանին սկսած օրը (Փետ. 1):

Դասախոսութեանց ընդունուելու համար թէ թոշակատը եւ թէ նպաստընկալ ուսանողները, Գանձապետին կողմէ ստորագրուած ընկալագիր մը կը ներկայացնեն Տեսչին եւ անկէ կ'ստանան ընդունելութեան տոմսեր :

---

### ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍ

Ծնորհիւ կրթասէր ազգայիններու նիւթական աջակցութեան՝ ձեմարանս ի վիճակի է որոշ թուով ուսանողներու դրամական նպաստ ընել, հետեւեալ պայմաններով .

1. Նպաստընկաները կ'ընտրուին առանց խորութեան թէ Այնթապի եւ թէ Կիլիկեան ուրիշ քաղաքներու Ազգային վարժարանաց այն ընթացաւարտներէն, որոնք թէեւ նիւթական միջոցէ զուրկ՝ բայց ուշիմ եւ կարող են, ու մասնաւորաբար ովհտագիր մը կուտան Ուսուցչական կամ Եկեղեցական ասպարէզը ընդգրկել :

2. Նպաստընկաները կը նշանակուին միայն մէկ տարուան համար : Նպաստին՝ յաջորդ տարիներու մէջ եւս շարունակութիւնը, ուսանողին ցոյց տալիք յառաջդիմութենէն եւ ընթացքէն կախուած է :

3. Նպաստ չ'տրուիր այն ուսանողին, որու վարփի աստիճանը 90 % էն ու դասերու աստիճանը 85 % էն վտր է :

4. Իւրաքանչիւր ուսանողի համար տարեկան նպաստի գումարը չ'կրնար 3 Օսմ. ուսկիէն աւելի ըլլալ, որով կը վճարուի Ուսումնական տարեթոշակը : Բացառիկ նպաստներ կրնան ըլլալ այն ուսանողներուն, որոնք Եկեղեցական ասպարէզը կ'ընդգրկեն :

5. Նպաստի համար դիմումները, թէ հին եւ թէ նոր ուսանողներու կողմէ, պէտք է գրաւոր կերպով կատարուին, ամէն տարւոյ Օգոստոս 15 ին կամ անկէ առաջ : Նոր դիմումները միայն այն ատեն նկատողութեան կ'առնուին, երբ Ընդունելութեան պայմաններու տակ յիշուած վկայագիրներն ալ միաժամանակ դրկուին ձեմարանիս Տեսչութեան :

---

### ՔՆՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՎԻՃԱԿԱՑՈՅՑ ԹՈՒՂԹԵՐ

Բացի շաբաթական կամ ամսական կարճ քննութիւններէ, որոնք կրնան տարբերիլ դասերու տեսակին համեմատ, ձեմարանը կը կատարէ երկամսեայ, կիսամեայ ու տարեկան քննութիւններ :

Երեսաւայ քննութիւնները տեղի կ'ունենան ամէն տարւոյ նոյեմբերի ու Ապրիլի կիսուն :

Կիսամատայ քննութիւնները տեղի կ'ունենան Փետր. ամսոյ սկիզբը :

Տարեկան քննութիւնները կը կատարուին Յունիս ամսոյ սկիզբը :

Քննութիւնները մեծ մասամբ գրաւոր կ'ըլլան :

Իւրաքանչիւր ուսանողի քննութեանց եւ ուսումնական շրջանի աշխատութեան ընդհանուր արդինքը, մասնաւոր ՀՀ Հայոց պատմական գրքուն ուսանողաց ու իրենց ծնողաց կամ պաշտպանաց, իւրաքանչիւր կիսամեայ շրջանի վերջը :

---

### ՎԿԱՑՈՒԱՆՆԵՐ

Ձեմարանս վկայականներ կուտայ,

Ա. Այն ուսանողներուն, որ Ընդհանուր դասընթացքէն ետքը Մասնագիտական ճիւղերէն մէկն ալ կ'աւարտեն :

Բ. Այն ուսանողներուն, որ ուղղակի Մասնագիտական ճիւղերէն մէկուն հետեւած եւ յաջողութեամբ աւարտած են իրենց դասընթացքը :

Գ. Այն ուսանողներուն, որ միայն Ընդհանուր դասընթացքի կը հետեւին եւ կ'աւարտեն զայն յաջողութեամբ : Այսպիսիներուն տրուած վկայականը համազօր է եօթնամեայ իտատի վարժարանաց վկայագիրներուն :

Իսկ մասնաւոր ուսանողներուն կը տրուի մասնաւոր վկայագիր (special certificate) :

---

## ՃԵՄԱՐԱՆԻՍ ՄԱՍՆԱՀՈՐ ԱՌԱՀԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ճեմարանիս ուսանողները, իր իբրեւ «Տար իւլ Մուալլիմին ի Բիւշտի» ունեցած պետական արտօնագրին ուժով, ազատ պիտի ըլլան զինուորական ծառայութենէ, ճեմարանիս քառամեայ շրջանի միջոցին:

Զինուորական ծառայութենէ ազատ կը մնան միայն այս ուսանողներ, որ արձանագրուած են իբրեւ «Կանոնաւոր» եւ կամ «Մասնագիտական» ուսանողներ:

Անոնք որ զինուորական տարիքը թեւակոխած կամ առաջին քննութենէ (մուաենէ) անցած են, չեն կրնար օգտուիլ վերոյիշեալ թոյլտուութենէն:

### Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Լ Ե Զ Ո Ւ

Ճեմարանիս պաշտօնական լեզուն է Հայերէնը: Ուսանողը թէ դպրոցին մէջ եւ թէ դպրոցէն գուրս հայերէն կը խօսին:

Թրքերէնը, իբրեւ պետական լեզու, կարեւոր տեղ մը կը գրաւէ ճեմարանիս ծրագրին մէջ եւ թէ մաքուր խօսելու եւ թէ մաքուր գրել կարենալու համար հարկ եղած ջանքը կը թափուի:

Իսկ օտար լեզուներէն Անգլիերէնն ու Ֆրանսերէնը մասնաւոր խնամքով կ'ուսուցուին:

### Մ Ր Ց Ա Ն Ա Կ

Ամերիկահայ կրթասէր ազգայիններէն Տոքթ. Արշակ Տէր Մարկոսեան, տարեկան երկու մրցանակ հաստատած է \$15 եւ \$10. ի (տասն եւ հինգ եւ տաս տալէր) որոնք պիտի տրուին Հայերէն լեզուով

ԺԱՆՈԹ. — Առաջադրութիւն մը կայ յառաջիկային Գերմաններէնն եւս աւելցնել ծրագրի մէջ:

լաւագոյն շարադրութիւնը գրող երկու ուսանողներուն, առաջին եւ երկրորդ աստիճանով:

Մրցանակի համար գրուելիք շարադրութեանց յատուկ պայմաններ՝ ամէն տարի կը յայտարարուին Տեսչութեան կողմէ:

### ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՈՑՆԵՐ

#### ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ճեմարանիս Մատենադարանը կազմուած է Ամերիկայի հայասէր բարեկամներու նուիրած 400 հատորի չափ գրքերէ, ինչպէս նաև Եկեղեցակաց Ընկերութեան յատուկ Հայերէն ու Անգլիերէն շուրջ 500 հատոր գրքերու բաւական ճոխ գրադարանէ մը, որ փոխադրուած է Ճեմարանս:

Մատենադարանս կ'ընդունի Հայերէն լեզուով հրատարակուած թերթերու մեծ մասը, ինչպէս նաև Անգլիերէն, ֆրանսերէն ու թուրքերէն լեզուով քանի մը կարեւոր թերթեր:

#### ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՈՑՆԵՐ

Շնորհիւ Մանչեսթրի ազգայիններու նիւթական աշակցութեան Ճեմարանս յաջողած է կազմակերպել քիմիական կոկիկ աշխատանոց մը:

Զեննարկուած է նաև բնագիտական գործիքներու հաւաքածոյի մը, ու աշխատանոցի յատուկ առարկաներու պատրաստութեան:

### ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

#### ԳՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Սոյն ընկերակցութիւնը, որ կազմուած է 1913 Սեպտ.ին, նըպատակ ունի լաւագոյն վերծանութեան սէրը արծարծել ուսանողներու մէջ եւ գրելու վարժեցնել զանոնք: Միութիւնը մասնաւոր ջանք կը թափէ սարքելու գրական հաճելի եւ օգտակար հաւաքոյթներ, ուր

Կը կարդացուի «Կիլիկիա» Ամսօրեայ հանդէսը , որ կը խմբագրուի ուսանողներու կողմէ , յատուկ խմբագրական մարմոյ մը հսկողութեան տակ եւ բարոյական , ընկերական , գիտական , պատմական ու բանասիրական կարճ ու խնամուած նիւթերու բովանդակութեամբ :

Միութիւնը ունի նաեւ իրեն յատուկ գրադարան մը , որ հետզգետէ կը ճոխանայ ուսանողներու գրենական ու դրամական նուէրներով : Գրքերու եւ թերթերու ընտրութիւնը կը կատարուի մասնաւոր խնամքով :

#### Football ի ԽՈՒՄԲԸ

Իբրեւ կազմակերպեալ խաղերէն մին , գնդակախաղը ներմուծուած է ձեմարանս առաջին տարեշրջանին : Ուսանողք , Բրօֆ. Յ. Միսիրեանի անմիջական հսկողութեան տակ , կազմակերպած ըլլալով «Football ի խումբ»ը , աշնան ու գարնան՝ մասնաւոր ու հրապարակային մրցումներ կը սարգեն տեղւոյս Կ. Թ. Գոլէճի Football ի խումբին հետ :

#### ԵՐԱԺՇՏԱՎԱՆ ԽՈՒՄԲԸ

Ձեմարանիս զանազան կարգերէն ընտրուած 8-10 ուսանողներ կը կազմեն այս խումբը , որ փոքր խմբանուագ (orchestra) մըն է :

Ծրագրուած է աւելի տեւական հանգամանք մը տալ այս խումբին , հայթայթելով հարկ եղած երաժշտական գործիները :

#### ՃԵՄԱՐԱՆԻ ՇԵՆՔԵՐԸ

##### ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԲԱԺԻՆԸ

Ճեմարանս իր անդրանիկ տարեշրջանը (1912 Սեպտ. 6/19-1913 Յունիս 10/23) այժմու գիշերօթիկի շէնքին մէջ բոլորելէ վերջ , երկրորդ տարեշրջանին սկիզբը փոխադրուած է Այնթապու արեւմտեան կողմը , քաղքէն տաս վայրկեանի չափ հեռու , նոր եւ կոկիկ եռյարկ շէնք մը , որ Այնթապի Վարդանեան Ընկերութեան սեպհականութիւնն է :

Սոյն շէնքը բացի գետնայարկէն , կը պարունակէ ընդհանուր սրահ մը եւ վեցը սենեակներ , որոնցմէ երեքը յատկացուած են ներկայ երեք կարգերուն դասարանական դրութեամբ , իսկ միւսները՝ Տեսչութեան , ուսուցչաց եւ տարրաբանական ու բնագիտական աշխատա-

նոցի : Ընդհանուր սրահը , որ միանգամայն ձեմարանիս մատենադարանն է , կը գործածուի համախմբութեանց , ատենական մարզանքի ու վերծանութեան համար :

Դասարանները կահաւորուած են իւրաքանչիւր ուսանողի համար առանձինն գրասեղաններով ու թիկնաթուններով :

Շնչքին յարակից կայ ընդարձակ պարտէզ մը , զոր ձեռնարկուած է բուսաբանական պարտէզի մը վերածել :

##### ԳԻՇԵՐՕԹԻԿԻ ԲԱԺԻՆԸ

Քաղքին արեւմտեան եզերքը , բարձր եւ օդասուն դիրքի մը վրայ գեղեցիկ շէնք մ'է գիշերօթիկի բաժինը , ունի երեք յարկ , որոնց վերի երկու յարկերը յատկացուած են ննջարանի , սերտարանի ու ճաշասրահի եւ Ծնօրինութեան գրասենեակի : Վարի յարկը կը ծառայէ իբրեւ շտեմարան : Խոհանոցը անջատ է բուն շէնքէն :

Գիշերօթիկի բաժինը ունի երկու ընդարձակ բակեր , մին ներքին եւ միւսը արտաքին , վերջինը կը գործածուի իբրեւ խաղավայր :

Ուսումնարանի ու գիշերօթիկի բաժինները միենոյն շրջափակի մէջ ունենալու համար , ուսումնարանին յարակից նոր շէնքի մը շինութեան ձեռնարկուած է որ պատրաստ պիտի ըլլայ առաջիկայ Սեպտ.ին (1914) : Նոր շէնքը մասամբ Գիշերօթիկի եւ մասամբ Ուսումնարանի պէտքերուն պիտի յատկացուի :

## ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԲԱԺՆԻՆ

1. Ըստ հանուն-բառի . — Ուսանողք բացարձակ հնագանդութիւն կը պարտին դպրոցական կանոններու , Տեսչութեան ու ուսուցիչներու հրամաններուն : Անոնք որ կ'անսաստէն , խստի կը պատժուին ու կրկնութեան պարագային նոյն խսկ կը վտարուին Ճեմարանէն :


2. Πισωνηλφ αμέν απωιοτ ηασερπιι սկզբնաւորութենէն կէս ժամ առաջ պարտաւոր են ներկայ գտնուիլ իրենց դասարաններուն մէջ : Նոյնպէս կէս օրուան ճաշի համար տուն գացողներ դասերու սկզբնաւորութենէն 15 վայրկեան առաջ պարտին վերադարձած ըլլալ :

4. Բացի արձակուրդի որոշեալ ժամանակներէն, արգիլուած է առանց հրամանի դուրս ենել կամ ձեմարանէն մեկսի:

5. Բացի դպրոցական գրքերէ, տետրակներէ ու գործիներէ ու է գիրք կամ առարկայ որ ուսանողաց դասերուն հետ վերաբերութիւն չունին, արգիլուսած են: Եթէ ուսանողաց քով գտնուին անտնցմէ, Տեսչութիւնը իրաւոնք ունի գրաւել զանոնք:

6. Սերտողութիւնները պէտք է ընել անձայն եւ ամփոփ,  
առանց ժամավաճառութեան: Ներեկի չէ առանց հրամանի տեղին ենել՝  
դուրս կամ ուրիշի մը քով երթայրու համար:

7. Ուսանողք պարտին ամկեղծ փոյթ ունենալ անթերի կատարելու ուսուցիչներու իրենց վրայ դրած պարտականութիւնները, լաւ ուսանիլ դասերը եւ խնամով եւ մաքուր կերպով պատրաստել գրաւոր աշխատութիւնները : Անփութութիւն, մոռացում, զանցառութիւն նշանակելի թերութիւններ են :



8. Ուսանողք պարտին բարեկիրթ կերպով ընել զրօսանքները :  
Բարեկրթութեան հակառակ անվայել խաղեր արգիլուած են :

9. Ուսանողք, թէ ուսուցիչներու հետ եւ թէ իրարու մէջ, ազ-  
նիւ եւ քաղաքավար վարմոնք ունենալ պարտին :

10. Ուսանողք պարտին խնամով եւ զգուշութեամբ գործածել  
ձեմարանին կահերը (գրասեղան, նստարան, աթոռ, ապակի են,) եւ  
ուսման գործիները (գրադարանի գրքեր, բառարաններ, քարտէսներ,  
գիտական գործիքներ են.) : Ոչ միայն եղած վնասը նիւթապէս հատու-  
ցանելի է վնասի հեղինակ աշակերտին կողմէ, այլ եւ պատժելի է սա ,  
եթէ անհոգութեամբ կամ չարութեամբ կը գործէ վնասը :

11. Դպրոցէ դուրս, փողոցներու կամ հասարակաց զրօսավայ-  
րերու մէջ, ու եւ է ուսանող պէտք չէ որ տեմսուի անվայել վարմոնքի  
կամ զրօսանքի մէջ, եւ պէտք չէ յարաբերութիւն ունենայ անյարմար  
անձերու հետ :

12. Ծխելն ու ոգելից ըմպելիք գործածելը իսպառ արգիլուած է :

13. Ուսանողք պարտին կիրակի եւ Տօն օրեր յաճախել կա-  
նոնաւոր կերպով իրենց պատկանած եկեղեցիները :

14. Բոլոր ուսանողք պարտին հագուլ ձեմարանի կողմէ որոշ-  
ուած համազգեստը :

### ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ ԳԻՇԵՐՕԹԻԿԻ ԲԱԺՆԻՆ

Կիլիկեան ձեմարանը բոլոր Կիլիկիոյ ու շրջանակներու մէջ Հայ  
Աղուայն հաստատութեան է որ ժէւրուէնք բաժն ու : Ննջասենեակներն  
օդասուն եւ ընդարձակ են, կերակուրներ՝ մննդարար եւ առողջապա-  
հիկ պայմաններու համաձայն :

Ամէն ջանք կը թափուի ընտանեկան կեանքի յար եւ նման  
մթնոլորտ մը ստեղծել գիշերօթիկի մէջ ու հրապուրիչ դարձնել զայն  
ուսանողներուն :

Ձեմարանիս գիշերօթիկի բաժինը, որ բացուած է 1913 Սեպտ.ին  
ունի մասնաւոր կազմակերպութիւն մը, իր Տնօրինով եւ ուրիշ չորս  
պաշտօնեաներով (մատակարար, խոհարար, գիշերապահ, եւ սպասաւոր):

Գիշերօթիկի բաժինը ունի իրեն յատուկ ներքին կանոնագիր մը ,  
որմէ համար կը դրուին հետեւեալները :

1. Ճեմարանիս Ուսումնարանի բաժնին յատուկ կանոնագրին  
բոլոր տրամադրութիւնները , պարտաւորիչ են նաեւ գիշերօթիկներուն :

2. Գիշերօթիկ ուսանողները՝ օրուան բոլոր գործառնութեանց  
մէջ պարտին հպատակիլ եւ համաձայնիլ ժամանակացոյցի տրամադրու-  
թեանց եւ զանգակներու ցուցմանց , կատարեալ եւ անմիջական ճըշ-  
դութեամբ :

3. Գիշերօթիկի Տնօրէնը , եւ կամ ի հարկին՝ իր կողմէ նըշա-  
նակուած հսկող ուսանողները , շարաթական հերթիւ կը հսկեն սերտողու-  
թեան պահուն , եւ մամսաւոր դիտողութեան տեսորին մէջ կ'արձանագ-  
րեն կանոնաց հակառակ վարուղները եւ կը հաղորդեն Տեսչութեան :

4. Շաբաթ իրիկուան սերտողութեան մէկ պահը եւ արձակուրդի  
օրերուն Շբ. գիշերուան երկու պահերն ալ աշակերտները կրնան ատե-  
նախօսական , վիճաբանական եւ դասախօսական օգտակար մարզանք-  
ներու յատկացնել :

5. Բոլոր գիշերօթիկ ուսանողները պարտաւոր են իրենց պատ-  
կանած Եկեղեցւոյ կրօնական պաշտամանց եւ պարտականութեանց հե-  
տեփի՝ գիտակից , բարեպաշտ եւ պարտաճանաչ վերաբերումով : — Հայ  
Եկեղեցւոյ զաւակները պարտաւոր են Կիրակի եւ Տօնական օրերուն՝  
առոտու եւ իրիկուն Եկեղեցի երթալ եւ Ս. Պատարագի եւ պաշտա-  
մունքին ներկայ ըլլալ :

6. Ճեմարանիս մէջ կրօնական եւ խղճի (յարանուանական տե-  
սակէտով) կատարեալ ազատութիւն կը տիրէ : Հետեւաբար այս  
կարգի ինդիրներու նկատմամբ վէճ , բրօբականտ եւ յարգանքի թերա-  
ցում եւ մանաւանդ հակակրօնական գաղափարներու արտայայտութիւն-  
ներ բացարձակապէս արգիլուած են :

7. Ճեմարանը իրեն յատուկ այցելու բժիշկն ունի , որ բոլոր  
ուսանողները կը քննէ տարեշրջանին սկիզբը եւ պարբերաբար՝ երբ  
հարկ տեսնուի : Բժշկական քննութեանց , այցելութեանց , ինչպէս եւ  
թեթեւ հիւանդութեանց ծախքերը ճեմարանը կ'ստանձնէ . իսկ ծանր  
հիւանդութեանց դեղերը եւ ի հարկին՝ բժշկական գործողութեանց ծախ-  
քերը ուսանողաց կը պատկանին : Եւ այս վերջին տեսակէ ծախքերուն  
ի հաշիւ տարեշրջանին սկիզբը , մուտքի պահուն , ամէն գիշերօթիկ

ուսանողէ կը գանձուի կէս Օսմ. ոսկի , պայմանաւ սակայն որ այդ  
գումարը վերադարձուի՝ եթէ տարեշրջանին մէջ այդ ծախքին պէտք չըլլայ:

8. Ծանր եւ յամառ հիւանդութեանց պարագային , բժշկին  
յանձնարարութեամբ եւ հրահանգով , ի հարկին , տեղեկութիւն կը  
տրուի հիւանդին ծնողքին կամ պաշտպանին : — Այս առթիւ ըլլալիք  
ծախքերը ուսանողներուն կը պատկանին :

9. Գիշերօթիկները եթէ ծնողք չունին , Այնթապի մէջ կամ  
իրենց ծննդավայրին մէջ պէտք է ունենան պաշտպան մը՝ որուն հէտ  
ի հարկին կը բանակցի ճեմարանի Տեսչութիւնը եւ Վարչութիւնը :

10. Աշակերտները պէտք է մաքուր եւ կոկիկ հագնին եւ ու-  
նենան բաւականաչափ (գէթ երեք ձեռք) ներքնազգեստ : Ճեմարանին  
որոշած համազգեստը պարտաւորիչ է նաեւ գիշերօթիկ ուսանողներուն :

11. Գիշերօթիկ ուսանողները պէտք է միասին բերեն հետեւ-  
եալ առարկաները :

Անկողին , բարձ եւ վերմակ .

1 Անկողնոյ ծածկոց .

2 Սաւան անկողնոյ .

2 Սաւան վերմակի համար .

4 Բարձի երես .

1 Արկդ .

1 Փոքր հայելի .

1 Սանտր .

1 Վրձին հագուստի .

1 Վրձին ակոայի .

4 Սեղանի անձեռոց .

1 Տոպրակ անմաքուր զգեստներու համար .

Ամբողջ ճերմակեղեններու վրայ պէտք է որ անջինջ մելանով  
կամ գունաւոր դերձանով ուսանողին անուան ու մականուան սկզբնա-  
տառերը նշանակուած ըլլան :

12. Ներքնազգեստները ամէն շաբաթ , անկողնեղէնները ամիսը  
անգամ մը կը լուացուին . իսկ ուսանողները տաք եղանակին ամիսը  
երկու (ձմրան մէջ՝ մէկ) անգամ բաղնիքի լոգանք կ'ընեն :

13. Կերակուրներն կը մատակարարուին եւ ինսամքով կը պատ-  
րաստուին Տնօրէնութեան կողմէ գրուած ճաշացուցակներու համեմատ ,


որոնք կը փոխուին եղանակին ու օրուան պատշաճութեանց համեմատութեամբ, եւ որոնց մէջ հոգ կը տարուին սննդարար եւ առողջապահական հանգամանքներուն եւ ուշադրութեան կ'առնուին ուսանողաց միջավայրի ընդհանուր ճաշակը :

Ճաշացուցակը կը պարունակէ հետեւեալները .

Նախաձու. — Թէյ, պանիր, կաթ, հավիթ, ձիթապտուղ, մըրգեղին են, ըստ եղանակին :

Ճաշ. — Մսեղին, իւղոտ (բանջարեղինով եւ ընդեղինով խառն կամ պարզ՝ ըստ եղանակին) կերակուրէ բաւարար չափով պնակ մը, (երբեմն, ըստ տեսակին եւ պահանջքին) երկու տեսակին երկու պնակ : Եւ պնակիկ մ'եւս պանիր, ձիթապտուղ, մըրգեղին, ոռոփ, չամիչ եւ կամ քաղցրեղին, ըստ եղանակին եւ պատշաճութեան :

Հարեւե. — Նոյնպէս ըստ ճաշի ցուցակին եւ բացատրութեան :



Գլուխութիւն պատճենահանութիւն

## ԾՐԱԳԻՐ ՈՒՍՄԱՆՑ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

### ՆՈՐԸՆ ԾԱՅ

#### Կրօնագիտուրին

Պատմութիւն Հայ Եկեղեցւոյ, համառօտ

(2)

#### Հայերէն

Ա. Աշխարհաբար. — Մեղրագետ, Բարձրագոյն ընթացք, Քերականութիւն՝ լրացուցիչ դասընթացք (Գաղանճեան), Շարադրութիւն։ (3)

Բ. Գրաբար. — Բնթացք ի Գրոց Բարբառ Բ. տարի, Բառագիտութիւն (Դուրեան)։ (2)

#### Օսմաներէն

Մէշրութիյէթ Գրա'աթը Գ. տարի. — Մութավվալ Սարֆը Օսմանի. — Ուղղագրութիւն, Շարադրութիւն, (2)

#### Անգլիերէն

Heath Readers Դ. և Ե. տարիները. — Թարգմանութիւն, Խօսակցութիւն, պարզ շարադրութիւն, Քերականական ծանօթութիւնք։ (4)

#### Ֆրանսերէն

Choix de Lecture. Տարրական դասընթացք. — Հիմնական եղանակ Բ. տարի. — Թարգմանութիւն, ուղղագրութիւն, Խօսակցութիւն և պարզ շարադրութիւն։ (3)

#### Պատմութիւն

Ա. Հայոց Պատմութիւն. — Խմկական Հայ. Պատմութիւն՝ Կ. Բասմանեան. Ա. կիսամեայ։ (2)

Բ. Օսմանեան Պատմութիւն. — Բարձրագոյն դասընթացք Օսմ. Պատմութեան՝ Մարգարեան։ Բ. կիսամեայ։ (2)

Աշխարհագրութիւն

Physical Geography, by Tarr. — Թուրքիոյ բնական աշխարհագրութիւնը, դասախոսութեամբ : (2)

Ուսողութիւն

Հնդարձակ Ալմէպրա . — College Algebra, by Wentworth. (4)

Քաղաքացիական կրութիւն  
Բ. Կիսամեայ . (2)

Գեղագրութիւն  
Հայ . Օսմ . Անգլ . (փոխն ի փոխ) . (2)

Գծագրութիւն  
Free Hand Drawing, (2)

Զայնագրութիւն  
Եւրոպական (2)

---

Ե Ր Է Ց

Կրօնագիտութիւն

Ներածութիւն Աւետարանի , ժամանակագրական և մելնաբանական ծանօթութիւններով : (2)

Հայերէն

Ա . Աշխարհաբար . — Հաւաքածոյք արդի հեղինակներէ . — Գրաւդիտական վերլուծում հատուածներու , շարադրութիւն : (3)

Բ . Գրաբար . — Հատընտիր հատուածք հին հեղինակներէ (Թոռնեան) : Քերականութիւն :

Օսմաներէն

Նէֆա՛լս ի Խոէպիկ . — Լիսան ը Օսմանի Գ. տարի : Սարֆ Վէ Նահկ . — Թարգ . օտար լեզուներէ և շարադրութիւն , պաշտօնական գրութիւններ :

Անգլիերէն

Heath Reader, Զ. տարի . — Brook's English Composition, Part I. Թարգմ . խօսակցութիւն , շարադրութիւն : (4)

Ժրանուերէն

Choix de Lecture, Միջին դասընթացք . — Քերականութիւն՝ Larive et Fleury 2<sup>me</sup> Année. (3)

Պատմութիւն

Արեւելեան Հին Ազգեր , Յոյնք և Հռովմայեցիք , General History, by Myers or Sanderson, (Մասնաւոր կարևորութիւն կը տրուի քաղաքակրթութեան պատմութեան) : (2)

Ուսողութիւն

Երկրաչափութիւն . — Elements of Geometry, by Phillips and Fisher. (3)

Կենդանաբանութիւն

Descriptive and Practical Zoology, by B. P. Colton. Բ. Կիսամեայ . (3)

Մարդակազմութիւն

General Anatomy and Physiology, by Eddy.

Բ. Կիսամեայ . (3)

Գեղագրութիւն

Հայ . Օսմ . Անգլ . (փոխն ի փոխ) . (2)

Գծագրութիւն

Free Hand and Mechanical Drawing . (2)

Զայնագրութիւն

Եւրոպական . (2)

---

## ՃԵՄԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Ե Բ Ի Ց Ա Գ Ո Յ Ն

### Կրօնագիտութիւն

Գործք Առաքելոց և ներածութիւն Առաքելոց թուղթերուն, ծառնոթութիւններով : Ա. Կիսամեայ . (2)

### Հայ Եկեղեցւոյ Պատմութիւն

